

# Ein Kommentar zur Apokalypse in der armenischen Handschrift Berlin 74.

Von

Dr. M. A. van den Oudenrijn  
Universitätsprofessor in Freiburg i. d. Schweiz.

(Fortsetzung und Schluß\*)

V.

Komm. zu Kap. XIII.

Fol. 99b.

1. Եւ տեսի զի ի ծովուն ելանէր գա-  
զան, եւ ունէր գուլիս եօթն եւ եղջիւրս  
տասն, եւ ի վերա եղջերուացն՝ տասն  
խոյր: Ծովն նշանակէ զխոտանան, յորոց  
եկանէ նեռնն: Եւ զեւն զկարողութիւն իւր  
թափէ ի նեռն, այսինքն զգլուխս իւր եւ զեղ-  
ջուրան եւ զխոյրն, որ է նշան յազթու-  
թեան, որպէս ի վերո գրեցաւ վասն եօթն  
մահուչափ մեղացն:

2. Եւ գազան, գոր տեսի, նման էր  
ընծո, եւ ոտք նորա որպէս գարջու, եւ բե-  
րան նորա որպէս առիծու: Ի ձեռն ընծուն,  
որ բերէ պէսպէս զոյնս, կեղծաւորութիւն  
նեռինն նշանակէ: Արջով խորամանկու-  
թիւնն, առիծովն<sup>73</sup> զազանաբարոյութիւնն  
եւ որկորամոլութիւնն: — Եւ ետ նմա վի-  
շապն գորութիւն մեծ: Զբոլոր զօրութիւնն  
իւր տայ զեւն նեռինն, զի ի նմա բնակեցէ,  
եւ սովաւ զամենայն չարութիւն իւր ի գործ  
ածցէ: Այլ զի ասէ զիւր՝ ոչ է ի շխանութիւն,  
եթէ ոչ յԱստուծոյ, զիս՞րդ զեւն ի շխանու-  
թիւն մեծ նեռինն տացէ: Ասելի է. թէ Աս-  
տուած տացէ զիշխանութիւն նեռինն, այլ  
զիշխանութիւն զայն այնքան փոխէ ի չարն,  
զի բոլորն զիւրեան հաւատասցի:

3. Եւ տեսի մի ի գլխոցն նորա իբրեւ  
գեներալ մահուաւք, եւ հարուածք մահուան  
նորա ողջանայր: Գլուխս այս նշանակէ զա-  
մենայն հերէտիկոսս ի սկզբանէ մինչեւ ի  
կատարած, զորս սուրբ հարքն սրով բանին  
Աստուծոյ զէնին, սակայն կրկին ողջանա ի  
զարս զարս, եւ առաւել խտագոյն ի ժա-  
մանակս նեռինն: Մնա հահոութիւնքն ի  
սիրտս նոցա իբր ողջացեալ: Եւ զարմացաւ

ամենայն երկիր ի վերա գազանին: Երկրով՝  
մեղաւորքն նշանակին:

5. Եւ քոյլ տուաւ նեռինն խօսել զվե-  
ծամեծս հառուրթիւնս ամիս քառասուն եւ  
երկուս, որպէս վերո գրեցաւ: Զի ահաւոր  
է Աստուած ի խորհուրդս իւր<sup>74</sup>, որ տայ  
թոյլ նեռինն յայնքան կարճ ժամանակս զբա-  
ղումս քարչել զկնի իւր, ինքեամբ եւ աշա-  
կերտօքն իւր, ի սուտ զարմանալիս, տան-  
ջանօք եւ պարզեւ տալով եւ խոտանալով:

6. ԶՀայր եւ զՈրդին եւ զՀոգին Սուրբ  
նախատէ եւս եւ զխորանն Աստուծոյ, այս-  
ինքն զեկեղեցի, եւ զմարտիրոսս եւ զբնա-  
կիչս երկնից: Եւ թոյլ տալ Աստուծոյ՝  
նեռինն այսպէս լինել վասն կրկին պատ-  
ճառի: Նախ՝ ասէ Տէրն. ի բազմանալ ա-  
նօրէնութեանն, սէր բազմաց ցամաքեցի<sup>75</sup>:  
Այսինքն ի պակասել սիրոյն եւ ի բազմանալ  
անօրէնութեանն [fol. 100 a] արժանի են  
այնպիսի անօրէն մարդոյ ունկղբի լինել  
զի ի նմանէ խարեցին, որպէս ասէ Յոր<sup>76</sup>.  
Թաղաւորացուցանէ զայր կեղծաւոր վասն  
թիւրութեան ժողովրդեանն<sup>77</sup>: Եւ ըստ ա-  
ռաքելոյն տացէ զնոսա Աստուած ի միտս  
անարգութեան, զի գործեցեն զչարն<sup>78</sup>:  
Երկրորդ՝ թոյլ տա Աստուած, զի որք ըն-  
տրեալքն են յայտնեցին<sup>79</sup>, որպէս ոսկին  
հրովն<sup>80</sup> եւ ժանգն խաւրով սրբի:

8. Որոց անուանքն ոչ են գրեալ ի գիրն  
կեանց: Գիր կենաց է նախասահմանութիւն  
Աստուծոյ եւ խոտանքն ոչ են գրեալ ի գիրս  
այս, զի ոչ են նախասահմանեալ ի կեանս  
յաւիտենականս: Եւ զառնն ի սկզբանէ աշ-  
խարհի գեներալ ասի, զի չարչարանք եւ մահ  
նորա ի սկզբանէ էր ի յԱզամ, յորժամ  
ննջեաց եւ Եւա կազմեցաւ ի կողից նորա<sup>81</sup>,  
օրինակեալ, որպէս յԱբէլ, ի Սահակ եւ ի  
մարդարէն Յունան<sup>82</sup>, որպէս ասէ Տէրն.  
որպէս եղեւ Յունան ի փոր կիրին<sup>83</sup>, ի Յօ-  
սէփ, որ վաճառեցաւ<sup>84</sup> եւ ի զանազան եղա-  
նակս զօհիցն զեւտական: Եւ անուանք սրբ-  
բոցն՝ ի սկզբանէ գրեալ են ի գիր զառինն,  
զի վասն նոցա փրկութեան զենաւ:

<sup>74</sup> Vgl. Ps. 65, 5.  
<sup>75</sup> Vgl. Mt. 24, 12.  
<sup>76</sup> Hs: յԱռակ.  
<sup>77</sup> Job 34, 30.  
<sup>78</sup> Vgl. Rom 1, 28.  
<sup>79</sup> Vgl. 1 Cor. 11, 19.  
<sup>80</sup> Vgl. Sap. 3, 6, Eccli 2, 5; 1 Pet. 1, 7.  
<sup>81</sup> Vgl. Gen. 2, 21—22.  
<sup>82</sup> Hs: յաւուրսն.  
<sup>83</sup> Mt. 12, 40.  
<sup>84</sup> Vgl. Gen. 37, 28.

11. Եւ տեսի այլ գազան զի ելանէր  
յերկրէ, ունելով եղջիւրս երկուս նման  
գառինն, եւ խօսէր որպէս զվիշապն: Սա  
կամ նշանակէ զմեծագոյն աշակերտս նեռինն  
եւ կամ զբազմութիւն աշակերտաց նորա:  
Եւ յերկրէ ելեալ ասի, այսինքն ի յընկե-  
րակցութենէ խոտելոցն: Եւ երկուս եղջիւրս  
ունէր, զի զՀրէայս եւ զհեթանոսս շինեցէ  
ժողովուրդ իւր, եւ որպէս Տէրն ժողովեաց  
զՀրէայս եւ զհեթանոսս ի փրկութիւն,  
նեռն ժողովէ ի կորուստ: Ոսէր եւ զազանս  
այս որպէս վիշապն, զի որպէս նեռնն խօ-  
սեցի զիւրովն, նոյնպէս եւ աշակերտք  
նեռինն խօսեցին որպէս նեռնն՝ զմոլո-  
րութիւնն:

12. Եւ զսուտ զարմանալիքն, զոր ա-  
րացէ<sup>85</sup> նեռնն, արացեն եւ աշակերտք  
նորա, զի զալուստն նորա է ըստ ազդեցու-  
թեան սատանայի, ամենայն նշանօք<sup>86</sup> եւ  
արուեստիւ ստօք<sup>87</sup>: Ըստ զինքն իբրեւ զԱս-  
տուած պաշտել, ի տաճարին Աստուծոյ  
նստելով<sup>88</sup>:

13. Եւ իջուցէ հուր յերկնից, որպէս  
զեւն իջոյց հուր յերկնից եւ այրեաց զխա-  
չինսն եւ զմանկունսն Յորա<sup>89</sup>: Նոյնպէս եւ  
աստ արացէ նեռնն եւ աշակերտքն իւր՝  
զիւրովն:

14. Եւ այսպէս խաբեցէ զպարզա-  
միտսն եւ զ(յ)իմարաց բազմութիւնն: Եւ  
արհեստիւ կամ կախարդանօք<sup>90</sup> արացէ<sup>91</sup>  
զինքն մեռեալ եւ յառնել, որպէս ասէ  
զազան վերջին<sup>92</sup> ողջացաւ:

15. Եւ պատկերաց տա խօսել, — զի  
նկարել տա զպատկերս իւր եւ զաշակերտաց  
խրոց — որպէս ընթեռնութեամբ բազմաց մո-  
խոց արարեալ: Եւ որք ոչ պագեցեն եր-  
կիր պատկերի նորա՝ սպանցին: Այսինքն՝  
հաւատացեալքն մեծ հալածանօք նեղեցին,  
որպէս ասէ Տէրն. ոչ եղեւ այնպիսի նե-  
ղութիւն ի սկզբանէ աշխարհի<sup>93</sup>: Զի ինքն  
նեռն եւ աշակերտ[քն] իւր կարի իմն լինի-  
ցին բղջախոս եւ զովիչք եւ թոյլ տուողք  
այլոց եւս մոլութեան, սակայն կեղծաւո-

<sup>85</sup> Hs: ասացէ.  
<sup>86</sup> Hs: շորհօք.  
<sup>87</sup> Vgl. 2 Thess. 2, 9.  
<sup>88</sup> Vgl. daselbst vs 4.  
<sup>89</sup> Vgl. Job 1, 16.  
<sup>90</sup> Hs: կախարդաբան.  
<sup>91</sup> Vielleicht an dieser Stelle besser ասացէ  
zu lesen?  
<sup>92</sup> Hs: զազանին վերջն.  
<sup>93</sup> Vgl. Mt. 24, 21.

րութեամբ իմն պատուաւոր կեցեն զին-  
քեանս<sup>94</sup>, զի այնու քարչեցին զմարդիք:

16—17. Եւ կնիք տացեն յաջո ձեռին  
աշակերտացն իւրոց, զի այնու ճանաչեցին  
զոլ աշակերտ նեռինն եւ կարացեն գնել եւ  
վաճառել: Եւ որք ոչ ունիցին զնշանն՝ ի  
կարի իմն վիշտս կեցցեն վասն ժամանա-  
կաւոր հարկութեանն, որ է ի կենդանութիւն  
մարմնոյ:

18. [Ա]ստ է իմաստութիւն: Որ ունի  
իմացումն՝ քեցէ գանունն գազանին,  
այսինքն քիւ է<sup>95</sup> անուն մարդո: Եւ ք[ի]ւս  
այս է վեց հարիւր վացուն եւ վեց: Պարտ է  
զիտել թէ զանունս զայս ո՞վ եր նմա,  
ծնօղքն նորա, թէ աշակերտքն, թէ բազմու-  
թիւն հետեւելոցն: Եւ այն՝ զի ասի. անի-  
ծեալ: Ի գիրս ոմանս զաթի. եւ կամ դատա-  
պարտելոց առաջնորդ եւ կամ լցեալ ամե-  
նայն չարութեամբ:

Zu vs 1 vgl. Berengaudus, 965—966.  
Zu vs 2 vgl. Berengaudus 967. — Որ բերէ  
պէսպէս զոյնս dürfte vielleicht auf irgend  
einen Übersetzungsfehler beruhen. Bereng.  
sagt: qui fertur diversos colores habere.

Zu vs 3 vgl. Berengaudus, 967. —  
Գլուխս այս նշանակէ զամենայն հերէտիկոսս,  
եւն. Bereng.: blasphemia designatur. Vgl.  
aber Pseudo-Augustin, Migne Pat. Lat. 35.  
2435: (unum ex capitibus) . . . quod dicit  
quasi occisum, haeretici sunt.

Zu vs 5 vgl. Berengaudus 968. —  
Եւ պարզեւս տալով եւ խոտանալով. Diese  
Geschenke des Antichrists werden auch in  
einer Predigt des Bischofs Bartholomäus  
von Marâgha erwähnt, dessen Գարոզագիրք  
zu den frühesten Erzeugnissen der Unitoren-  
literatur gehört. Quelle des Bartholomäus  
ist der Abschnitt über die Parousie des Herrn  
im Kapitel über die Adventszeit am Anfang  
der berühmten *Legenda Aurea* des Jacobus  
a Voragine. Vgl. auch das *Compendium  
theologicae veritatis*, VII, 9.

Zu vs 6 vgl. Berengaudus, 968.  
Zu vs 8 vgl. Berengaudus, 960—969. —  
Եւ ի մարդարէն Յունան, որպէս ասէ Տէրն,  
եւն ist Zusatz des Vardapeten. Er hat den  
Bibeltext Mt. 12, 40 anbringen wollen, wo  
թիւ է.

\* Vgl. Handes Ams. 59 (1945), 87—98; 61  
(1947), 36—46.  
<sup>73</sup> Korr. aus: առիծովն.

von Jonas als Vorbild Christi ausdrücklich die Rede ist.

Zu vs 11 vgl. Berengaudus, 969—970. — Սա կամ նշանակէ զմեծագոյն աշակերտս նեոինն եւ կամ զբազմութիւն աշակերտաց նորա; Bereng.: aut unum ex discipulis Antichristi . . . aut multos. — եւ որպէս Տէրն ժողովեաց զՀրէայսն եւ զհեթանոսս ի փրկութիւն, եւն. Wohl Zusatz des Vardapeten.

Zu vs 12 vgl. Berengaudus, 970.

Zu vs 13 vgl. Berengaudus, 970.

Zu vs 14 vgl. Berengaudus, 970—971. Die armenische Fassung ist unklar; die Aussage ist nicht vom wirklichen sondern von einem vorgeblichen Tode des Antichrists zu verstehen.

Zu vs 15 vgl. Berengaudus, 971. — որպէս ընթեռնումք բազմաց մոռուց արարեալ, Bereng.: quosdam . . . fecisse legimus. — Ձի ինքն նեոն, եւն; die Partikel „ը“ paßt nicht in den Zusammenhang und ist wohl auf zu starke Kürzung zurückzuführen. Inhaltlich verwandt ist Compendium theologiae veritatis VII, 8.

Zu vs 18 vgl. Berengaudus, 972. — Պարտ է գիտել զանունս զայս ո՞վ եղ նմա. Die Frage ist interessant und zeugt von exegetischem Sinn. Einigermaßen zu vergleichen sind unter den abendländischen Kommentatoren dieser Stelle Beda, Migne Pat. Lat. 93, 172 und Rupert von Deutz 169, 1081. — զատապարտելոց առաջնորդ. Zu vergleichen ist der Kommentar des Andreas von Caesarea zu dieser Stelle, Migne Pat. Gr. 106, 340: καχός ὁδηγός. Dieser Kommentar, kann, weil er in armenischer Übersetzung vorlag, dem Vardapeten bekannt gewesen sein.

ՍՏԵՓԱՆՈՍ ԶԻՔ ԶՈՒՂԱՅԵՐԸ

ԳՐԻՉ ԿՎԵՐԻՉ ԵՒ ՏԵՂԵՍՍԵՑ ԲԱՆՎԵՆՑ (1603—1637)

1. Ստեփանոս ծննդեամբ Հին-Ձուղայեցի է, մականուամբ կոչուած Ձիք: Իր ծնողներն են Ստեփանոս եւ Շնո(ր)հաւոր: Ընտրած էր եկեղեցական վիճակը իբրեւ ամուսնացեալ քահանայ: Կնոջ անունն էր Աննա: Կը յիշուին իր զաւակներէն Բարսեղ վարդապետ եւ Յակոբ գրիչ: Վերջինէս ունինք հետեւեալ Յիշատակարաններս.

ա. Աւետարան, գրուած Վենետիկ 1659ին. «Ձրազմամեղ Յակոբ գրիչս եւ զհայրն իմ զտէր Ստեփաննոս քահանայ որ մականուամբ կոչի Ձիք եւ զմայրն իմ զԱննայն յիշեցէք միով ողորմայիւ եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ: Գրեցաւ ի Վէնէտիք. թվ. ՌՃԸ<sup>1</sup>»:

բ. Ժամագիրք, ձեռագիր Մխիթարեան Մատենադարանի ի Վենետիկ, գրուած 1398ին. ունի յիշատակագրութիւնս. «Ի թվ. ՌՃԹ (1660). Յակոբ որդի տէր Ստեփաննոսի, ի Վէնէտիք<sup>2</sup>»:

գ. Նոյն քաղաքին մէջ 1661ին օրինակած է Աւետարան մը, որ ունի Յիշատակարաններս<sup>3</sup>. «Բազմամեղ Յակոբ զծողոս եւ զհայրն իմ զՁիք տէր Ստեփաննոս քահանայն եւ զեղբայրն իմ զԲարսեղ վարդապետն եւ զմայրն իմ զԱննային» յիշեալիք. «գրեցաւ ի Վէնէտիք. թվին ՌՃԺ. յունիս ժթ»: Դարձեալ՝ «Թվին ՌՃԺ. գրեցաւ ի Վէնէտիք, ձեռամբ անարժան Յակոբի որդւոյ Ձիք տէր Ստեփաննոսի քահանայի Ձուղայեցւոյ, ի դուռն սուրբ Մարկոս Աւետարանչին»:

դ. Չմատ, Անտոնեան Հարց Թ. 95 Աւետարանին մէջ կայ յիշատակագրութիւնս. «Ես Ձիք Ստեփաննոսի որդի [տէր Առաքելի որդի] տէր Յակոբս եկի զեղս հետ Աղաքանդը վարդապետին թվին ՌՃՈԶ (1697) սեպտեմբերի Բ, փոքր թուական ՁԲ, Նազար ԻԶ օրն Եշաբթի. վերջ»:

<sup>1</sup> Պարիս, Ազգային Մատենադարան, Թ. 12. Բամասէր 1900, էջ 147—148:  
<sup>2</sup> Հ. Մ. Պոստոլեան, Յիշատակարանք. յամն 1660 (անտիպ):  
<sup>3</sup> Աւետարան Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ ի Կ. Պոլիս. չմատ. Բարդէն Վ. Կիւլէսէրեան, Կոլոս Յովհաննէս պատրիարք. Վիեննա 1904, էջ 120—121:  
<sup>4</sup> Հաւանօրէն «տէր Առաքել» Յակոբի հոգեւոր հայրը՝ ձեռնադրիչն եղած է. Ձիք Ստեփաննոսի որդին առաջին անգամ հոս ինքզինքը «տէր Յակոբ» կը ներկայացնէ:

2. Հին Ձուղայի բնակչութիւնը 1605ին Շահ Աբասի հրամանով տեղահան եղաւ եւ փոխադրուեցաւ Սպահան եւ հիմնարկեց հոն, զետի միւս ասիին Նոր Ձուղան: Տեղահանուողներու թուին մէջ էր Ստեփանոս քահանայ: Այս առիթով երգեց իր ծանօթ Ողբն. «Ափսոս քեզ Հայոց խեղճուկ ժողովուրդ»: Ձեռագրուելով Սպահան-Նոր Ձուղայ, գրեց այստեղ 1608ին խոջայ Վէլիջանի խնդրանքով Աւետարան մը: Յիշատակարանին կարեւոր մասերն են. «Եւ արդ ես յետինս ի կարգաւորաց եւ անպիտանս . . . զՍտեփաննոս սուտանուն քահանայ որ ամուսնաց միայն եմ եւ ոչ զործով, շնորհուն Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ Աւետարանս ի Շօշ քաղաքն, որ թարգմանի Ասպահան, որ էտես Դանիէլ զտեսիլն թագաւորացն Պարսից. . . : Եւ արդ աւարտեցաւ զսուրբ Աւետարանս ի մեծ թվականիս Հայոց ՌԾԷ. զոր չէ արժան կրկնել անուն տեղոյս այսորիկ, ի վարդապետութեան <որ ի> մերումս միջի արի եւ քաջ բարունապետ Սիմէոն վարդապետի . . . որ քարոզելով զբանն Աստուծոյ մխիթարէ զսուրբ եւ զտրտմեալ սիրտս ամենայն քրիստոնէից ի յանօրինաց աշխարհս. եւ Աստուած զինքն մխիթարեցէ: Ի հայրապետութեան տեսուն Մելքիսէթ կաթողիկոսի եւ Դաւթի ամենայն Հայոց. եւ ի յառաջնորդութիւն մերոյ վիճակիս Մեսրոպ արհեսպի. եւ ի թագաւորութեանն իմաստուն Շահ Ապասին՝ Կարմիր գլխոյ . . . : Դարձեալ . . . Աստուած ողորմի ասացէք անարժան Մեսրոպիս, որ ծաղկեցի զեղեցիկ զեղով, ոսկով եւ լազուարտով եւ ազգի ազգի դուռնով յիշատակ բարի . . . »<sup>5</sup>:

Յաջորդ տարին ալ օրինակած է ուրիշ Աւետարան մը, այս անգամ խոջայ Տէրիջանի խնդրանքով: Կըսուի. «Եւ արդ ես յետինս ի կարգաւորաց . . . Ստեփաննոս սուտանուն քահանայ . . . կատարեցի զսուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՌԾԸ. ամի. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի. ի հայրապետութեան տեսուն Մելքիսէթ կաթողիկոսի ամենայն Հայոց. եւ ի յառաջնորդութիւն մերոյ զեաւղիս Ձուղայոյ Մեսրոփ արհեսպիսկո-

<sup>5</sup> Ձեռագիր. Բաղդադի Առքանագեան Ընկերութեան Մատենադարանի (Չմատ. Հանդէս Ամսօրեայ. 1889, էջ 269), որ յետոյ անցած է Լոնտոն, Բրիտանական Քանդաւարան, Conybeare, Catalogue, Թ. 24, էջ 43—44. Չմատ. նաև. Բազմավեպ 1923, էջ 136—138:

պոսի. եւ ի թագաւորութեան Շահ Ապասին. <որ> ՌԾԲ. Թուին եկեալ բազում զօրօք ի վերայ թագաւորանիստ քաղաքին Դավրէժոյ՝ առնուլ զվրէժ արեան հաւրիւրոյ. եւ ի սպառ կոտորեաց զազգն Աւամայ ճարտար եւ հնարագործութեամբ իւրով: Եւ անցեալ ընդ Երասին ի գաւառն Արարատեան ի վերայ բերդին յԱրեւանայ եւ կոտորեաց զնոսս եւ աւար էհար զամենայն երկիր: ՌԾԳ. ամին սուք հասուց ի վերայ Հայաստանաց. զոր քակեաց եւ աւերեաց զամենայն տունս եւ բնակութիւնս. զորս փակեալ եւ թափեալ ի յամրոցս եւ ի ծերպս վիմաց՝ զոմանս գտեալ կոտորեալ, զոմանս զերի վարեալ եւ առաքեալ ի Շաւշ քաղաքն Ասպահան. որ ետես Դանիէլ անապատին . . . : բնակեցոյց զմեզ ի հարաւակոյս կողմ զեռոյն Ձանդարոյ, որ է աղի. եւ շինեցաք տունս եւ բնակութիւնս եւ յեկեղեցիս յաղազս աղօթից. եւ անուանեցաք զանուն զեռոյն Ձաջոյց եւ ոչ Ձուղայ: Ձի թէպէտ թագաւորին սիրտն քաղցր է ի վերայ քրիստոնէից, սակայն բնակիչք քաղաքին չարք՝ հակառակ հայոյիչ է օրինաց մերոց . . . զի նիւթք երկրին չար է, ջերմուտ եւ ցաւային. ամենայն ցաւալից մարմնով . . . »: Կըսուի թէ խոջայ Տէրիջան «ետ գրել զտէրունեան Աւետարանս առատ տրիւք եւ զարդարեաց մեծածախ ընչիւք»: Արդեամբք ալ ճոխ է ձեռագիրը բազմագոյն եւ ոսկեզարդ նկարներով<sup>6</sup>:

3. Իբր 1610ին պատահած ըլլալու է այն միջադէպը, զոր կը պատմէ Չաքարիա Սարկաւազ. Շահ Աբաս «յաւուր միում ելեալ արտաքոյ քաղաքին յանդատտանս՝ ամենայն հարձիւն եւ զրօնոյր: Երէց մի պրի ի Ձուղայոյ, որում ասէին Ձիք տէր Ստեփաննոս. սս ելանէր երբեմն երբեմն արտաքս ի քաղաքէն, չըջէր սաղմոսելով միայն: Յաւուր միում եսս զնացեալ երէցն՝ եւ չըջէր. եւ տեսանէր ի հեռաստանէ զբանակ մի, զի մեղմով գային: Եւ իբրեւ հուպ եղեւ սակաւ մի եւ ետես զբազմութիւն կանանց. եւ սպա ծանեաւ լինել Շահին. եւ աս եւ զողումն կալաւ զերէցն. եւ հաստատեաց ի սրտի իւրում զմահ իւր: . . . էարկ զաղարողոնն ի վերայ գլխոյն եւ անկեալ յերկիր եւ զողայր: Եւ աս եկեալ Շահն կանամբ՝ կանգնեցաւ

<sup>6</sup> Conybeare-Baronian, Catalogue of the armenian Manuscripts in the Bodlian Library, Oxford 1918, No. 53, p. 107—111.